ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/25

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝

Բողոքաբեր՝ «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ռ. Թադևոսյան, Ի. Մուրադյան

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ՝ Ա. Բազեյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 08.05.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին և մրցույթային հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձի 10.05.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 15.05.2019թ. և 24.05.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 24.05.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.05.2019թ.-ին:

2. «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն 30.04.2019թ.-ին Պատվիրատու հանդիսացող Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/2 ծածկագրով հայտարարված մրցույթին սահմանված կարգով և պայմաններով ներկայացրել է մրցույթի մասնակցության հայտ www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով:

Վերը նշված մրցույթին մասնակցությունը ապահովելու նպատակով Ապահովագրական Ընկերության կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են Պատվիրատուի ներկայացված պահանջները, այդ թվում փաստաթղթերը ներկայացվել են պատվիրատուի հայտ ներկայացնելու կարգին և գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգում սահմանված պայմաններին համապատասխան:

30.04.2019թ. «Առողջության ապահովագրման» ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված թիվ ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/2 ծածկագրով մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի կողմից www.gnumner.am կայքում հրապարակվել է հայտերի բացման թիվ 2 արձանագրությունը. որով նշվել է, որ «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, այն է՝ «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ստորագրված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Գտնում եմ, որ վերը նշված պատճառաբանությունը չի համապատասխանում Պատվիրատուի կողմից հայտարարված մրցույթին ներկայացված պահանջներին:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ Պատվիրատուի կողմից ներկայացված մրցույթի հայտերին ներկայացվող պահանջներում որևէ տեղ չկա նշում այն մասին, որ Մրցույթին ներկայացված հայտերը և փաստաթղթերը հաստատված կհամարվեն միայն էլեկտրոնային ստորագրության առկայության պարագայում: Որպես Պատվիրատուին ներկայացվող փաստաթղթերի նկատմամբ պահանջ նշված է միայն, որ փաստաթղթերը լինեն հայտ ներկայացվող կազմակերպության կողմից հաստատված:

Ապահովագրական ընկերության կողմից հայտերի և փաստաթղթերի հաստատված լինելու հանգամանքը ապացուցվում է գլխավոր տնօրենի ստորագրությամբ և ընկերության կլոր կնիքի առկայության ղեպքում, ինչը և առկա է հայտում ներկայացված բոլոր փաստաթղթերում:

Պատվիրատուի Մրցութային հրավերում որևէ կերպ կամ որևէ տեղ նշված չէ, որ ընկերության կնիքը և գլխավոր տնօրենի ստորագրությունը չեն հանդիսանում հաստատման վավերացում., և էլեկտրոնային ստորագրության բացակայությունը կարող է հայտային փաթեթը դարձնել Մրցույթի պահանջներին անհամապատասխան:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ Պատվիրատուի Մրցութային հայտարարության միայն 7.19 կետում է հիշատակված էլեկտրոնային ստորագրության պահանջը, որը հանդիսանում է /հայտերի բացում, գնահատում ն արդյունքների ամփոփում/ բաժնի ենթակետ, ընդ որում մրցութային հայտարարության տվյալ բաժնին ընկերությունը կարող է անդրադառնալ հայտային փաթեթը ներկայացնելուց հետո, հետրաբար տվյալ կետում նշվածը չի կարող դիտարկվել ընթացակարգի հայտի ներկայացման պարտադիր պահանջ, և որևէ մասնակից տվյալ կետի պահանջով չի կարող զրկվել մրցույթի մասնակցի մրցակցային հավասար իրավունքից:

Համաձայն ներկայացված հրավերի մեր ընկերության կողմից հստակ պահպանվել է հրավերում նշված հայտ ներկայացնելու կարգը, ընթացակարգի հայտը պատրաստված է Հրավերի Մաս II-ի հրահանգի բոլոր կետերի համապատասխանությամբ, իսկ 7-րդ բաժնում նշված ցանկացած կետ պետք է վերաբերի միայն հայտերի բացմանը, գնահատմանն և ամփոփմամբ, իսկ հայտերի կազմման և ներկայացման կարևորագույն հանդիսացող պայմանը առաջին անգամ այդ ենթաբաժնում հիշատակվելու դեպքում մրցույթային հայտային փաթեթը չի կարող դասակարգվել հայտ ներկայացնելու պահանջներին անհամապատասխան:

Բացի այդ պետք է նշել նաև, որ «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն կայանալիք մրցույթում ներկայացրել է ամենացածր գնային սաաջարկը, որը իրավունք է տալիս ընկերությանը ընդգրկվել մրցույթի առաջին տեղում:»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենի 46-րդ և 50-րդ հոդվածի պահանջներով՝ Բողոքներ քննող անձին խնդրել են, պարտավորեցնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին և մրցույթային հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

3. <u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.05.2019թ. գրությամբ դիմել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին՝ հնարավորություն տալով «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 08.05.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Պատվիրատուն ներկայացուցիչը մասնակցելով նիստերին բանավոր կերպով հայտնել է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար առողջության ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգը կազմակերպվել է էլեկտրոնային գնումների www.armeps.am համակարգի միջոցով:

Հրավերով սահմանվել է, որ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Կազմակերպված ընթացակարգին մասնակցել է նաև «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն, որի հայտը մերժվել է, քանի որ մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը՝ նաև գնային առաջարկը էլեկտրոնային ստորագրված չեն եղել, իսկ գնային առաջարկը հնարավոր չէ շտկել:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր կետերը:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից առողջության ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 23.04.2019թ. հայտարարվել է «ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Ընկերությունը թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում հայտնել և հավաստել է, որ կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ:

Ընկերության կողմից՝ հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը՝ այդ թվում նաև թիվ 4 հավելվածը, գնային առաջարկը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Գնահատող հանձնաժողովի 30.04.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված փաթեթները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝ «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի, ում կողմից ներկայացված հայտը ստորագրված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ...:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 08.05.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 1-ին մասի 7.19 կետով սահմանված են Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Ընդ որում գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից, որպես ՀՀ ռեզիդենտ, պետք է հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը՝ հատկապես գնային առաջարկը, հաստատված լիներ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի բացակայության պայմաններում ներկայացված հայտն ենթակա է մերժման՝ առանց շտկման հնարավորության ընձեռնման:

Ուստի, տվյալ պարագայում, գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժելու մասին որոշումն իրավաչափ է և բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 08.05.2019թ.-ին ներկայացրած բողոքն ամբողջությամբ մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**